**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի թիվ 1 մանկապարտեզի շենքի մասնակի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններիությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ՀԲՄԾՁԲ-24/115 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ՀԲՄԾՁԲ-24/115 ծածկագրով պայմանագրում 2024 թվականի նոյեմբերի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և «ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2024 թվականի նոյեմբերի 22-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է ծառայության դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2024 թվականի նոյեմբերի 22-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2024 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ՀԲՄԾՁԲ-24/115 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ծառայության մատուցման ձեռքբերման պահանջը չի դադարել և ծառայության մատուցման ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 7.5 և 7.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**